

ՀԱՅ ԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՅՈՒՆԵԼԵԱՆԸ*

Այս տարի Հայ ազգը ձեռնարկեց Հայ տպագրութեան չորսհարիւրամեակը տօնելու, որ առիթ եղաւ նաեւ Հայ գրի գիւտի յիշատակը արծարծելու: 1912 թուի հոկտեմբերի 13-ին որոշուած էր երկու պատմական խոշոր երեւոյթների յորեկենական տարին սկսել՝ գրերի գիւտի տօնի հետ կապելով նաեւ քրիստոնէութեան զարգացման սլաւութիւնը Հայաստանում: Այսպէս են հաշուում ազգային եկեղեցական-գրական աւանդութեան վերայ հիմնուելով:

Ներկայ հայութիւնը՝ տօնելով իւր քրիստոնէական-քուլթուրական վերածնութիւնը իբրեւ ազգային տօն, ջանք չի խնայում նաեւ տալու նրան գիտական բնաւորութիւն: Եւ ինչպէս ս. Էջմիածնի «Արարատ» պաշտօնական ամսագրից (1912 թ. 861 եր.) երևում է՝ Հայ գրի ու տպագրութեան մեծ յորեկեանի առթիւ, ծրագրւում է մի շարք կրթական և գիտական ձեռնարկութիւնների սկիզբը դնել:

Տօնի կազմակերպութեան ձեռներէցութիւնը պատկանում է Ռուսահայերին. յորեկենական հանդէսների կեդրոնատեղին ընտրուած է ս. Էջմիածինը՝ ամենայն Հայոց կաթողիկոսների աթոռանիստը, ուր խմբուած են Հայ եկեղեցական-ազգային լուսաւորութեան գործին նուիրուած լաւագոյն ոյժերը ի դէմս վանքի ուսումնական միաբանութեան և Գէորգեան հոգևոր ձեմարանի ուսուցչական խմբի: Ընտրուած է կեդրոնական յորեկենական յանձնաժողով, որին պիտի օժանդակէ նաեւ յիշեալ հոգևոր ձեմարանի մանկավարժական խորհուրդը: Ամեն ջանք գործ է դրւում այս տօնը համայնական դարձնելու համար, ուստի և հրա-

* Պրոֆ. Ն. Մառի այս յօդուածը, որի ազատ փոխադրութիւնն էնք տալիս, տպուած է «Христианскій Востокъ»-ի III. պրակի մէջ:

ւիրւում են մասնակցելու ոչ միայն հայ-լուսաւորչական եկեղեցու անդամները, այլ և կաթողիկ ու բողոքական հայութիւնը, առաւելապէս ի հարկէ Վենետիկի և Վիեննայի Մխիթարեան ուխտերը, որոնց շատ բան պարտական է յատկապէս հայագիտութիւնը, որի շնորհիւ նաև՝ որոշ չափով, եւրոպական գիտութիւնը, յատկապէս նրա պատմական և պատմական-գրականական ճիւղերը: Մամուլի ասելով յորելենական հանդէսներին պիտի հրաւիրուին նաև օտար ծագում ունեցող հայազէտներ:

Այս մեծ տօնը գտնւում է ամենայն Հայոց Հայրապետի՝ Տ. Տ. Գէորգ Ե-ի բարձր հովանաւորութեան ներքոյ. նա է սահմանել տեական յորելենական հանդէսներ, որոնց փայլուն և փառաւոր մոմենտները ձգուած են տարեվերջին:

Աներկբայ է, որ գրերի գիւտը՝ թէ՛ հայ ժողովրդի համար և թէ՛ մանաւանդ համամարդկային տեսակէտով, աւելի մեծ նշանակութիւն ունի և աւելի մեծ ստեղծագործական բնաւորութիւն է կրում, քան թէ հայ տպագրութեան արուեստը: Հայ գիրը ոչ միայն դրացի ազգերի քրիստոնէական դպրութեան նախապատճառ է եղել՝ այլ ստեղծել է նաև հին Հայաստանում հայ լեզւով քրիստոնէական գրականութիւն, որ յառաջ է բերել կրօնական և մտաւոր շարժում. և ահա այս քուլթուրական ազդակներն են, որ հանել են հայ ժողովրդին ազգային շահերի նեղ սահմաններից և տուել նրան համամարդկային նշանակութիւն: Հայ գրի շնորհիւ՝ հայութիւնը հիմնադիր է հանդիսանում ինքնուրոյն աստուածաբանական մտքի, ձգում է իւր լուման քրիստոնեայ արեւելքի քուլթուրայի գանձարանը, որով նաև միանգամայն համամարդկային յառաջնադարանը: Գրի արդիւնք եղող գրական յիշատակարանների շնորհիւ է, որ մինչև այսօր էլ թափւում են պատմական գիտութեան գանձարանը կենդանարար գիտութեան նորանոր վտակներ:

Ո՛չ հանդէսների նախապատրաստութեան, և ոչ էլ նոցա սկզբնաւորութեան շրջանում մենք չենք նշմարում հայ գրի

զիւտի տիեզերական նշանակութեան մասին որ և է իրական ակնարկ, բայց և այնպէս երկու խոշոր քուլթուրական պատմական երևոյթներին նուիրուած խոհուն ծրագրուած հանդէսները անկասկած երևան կհանեն՝ և արդէն իսկ հանում են զիտական հարցեր: Եւ մենք՝ ի նկատի առնելով մեր թերթի նպատակը, ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն առաջիկայ հանդէսներին՝ այն յուսով, որ նոքա յառաջ կբերեն հայ ժողովրդի լայն շրջաններում ազգային հետաքրքրութիւն դէպի հայագիտութիւնը, սէր կծնեն հայ սուսնողութեան սրտում իւրացնելու նորա ներկայ բարդ եղանակները և կնպաստեն սեփականացնելու՝ շնորհիւ ներկայ արևելագիտութեան, լայն հորիզոնների ներքոյ արդէն իսկ լուսարանուած և ստուգուած փաստերը:

Կը կամենայինք հաւատալ, որ հեռու չէ այն ժամանակը, երբ երկու յորելեաններից հիմնականը, այն է հայ զրի զիւտը հնարաւոր կլինի տօնել որպէս զիտութեան տօն, և որ՝ մինչև այն ժամանակ, հնար կլինի՝ մասնազէտների միահամուռ ջանքերով՝ ստեղծել նորա իսկական պատմութիւնը, փոխարէն ներկայ ազգային պատմական կաղապարման:

Թարգ. Դ. Վարդ. Չէօրէքչեան

